ՇՈՒԿԱՅԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԳԻՏԵԼԻՔԱՀԵՆՔ ԷՎՈԼՅՈՒՑԻԱՆ ԵՎ ՊԵՏՈՒԹՅԱՆ ՆՈՐ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԴԵՐԸ

ՄԱՐԶՊԱՆՅԱՆ Հ. Ա.

Հասարակության զարգացման մինչարդյունաբերական-արդյունաբերական-հետարդյունաբերական հետագծում սոցիալական պետության՝ որպես շուկայական տնտեսության սուբյեկտի գործնական դերակատարության բովանդակության բացահայտումը հնարավորություն է ընձեռում հստակ որոշել տնտեսական զարգացման գործոնների ժամանակակից հիերարխիան, ինչպես նաև՝ շուկայական համակարգի էվոլյուցիան արդյունաբերական-աշխատանքահենք տնտեսությունից հետարդյունաբերական-գիտելիքահենք տնտեսությանն անցման շրջանում և այդ հիման վրա իմաստավորել նաև շուկայի և պետության փոխազդեցության բնույթի ու բովանդակության փոփոխությունները:

Մինչարդյունաբերական հասարակության մեջ անվիճելիորեն առաջնահերթ նշանակություն ունեին տնտեսական զարգացման բնական գործոնները և դրանք կիրառող մարդը: Արդյունաբերական հասարակությունն, ինչպես հայտնի է, բնութագրվում է կապիտալի գերակա դերով և կապիտալը համալրող աշխատուժի օգտագործման՝ իրեն յուրահատուկ եղանակով: Միայն հետարդյունաբերական հասարակության պայմաններում է մարդը՝ գիտելիք ստեղծողը, կրողը և օգտագործողը, դառնում տնտեսական զարգացման ամենաառանցքային գործոնը: «Ըստ ամենայնի, մենք ականատեսն ենք առաջնորդության «դարակազմիկ» փոփոխության, երբ կապիտալը, որ գլխադաս էր արդյունաբերական հասարակության ձևավորման ու զարգացման մի քանի դարերի ընթացքում, XX դ. վերջում առաջնության դափնին զիջում է բարձրորակ, ստեղծագործական աշխատանքին»[1]:

Իհարկե, գիտելիքի՝ որպես զարգացման ու բարգավաճման աղբյուրի կարևորությունը գիտակցվել է դեռևս մարդկային քաղաքակրթության «մանկության» շրջանում: Ք.ա. VII դ. հին չինական ասույթն ուսուցանում էր. «Մեկ տարվա պլան ես կազմել՝ ցանի՛ր ցորեն: Տասը տարվա պլան ես կազմել՝ տնկի՛ր ծառեր: Եթե մտածում ես հեռավոր ապագայի մասին՝ կրթի՛ր մարդկանց և զարգացրու նրանց կարողություններն ու հմտությունները»[2]: Ամերիկացի տնտեսագետ Ս. Կուզնեցը, գիտական շրջանառության մեջ մտցնելով «ժամանակակից տնտեսական աճ» հասկացությունը (տնտեսական աճ, որն ուղեկցվում է տնտեսության զարգացմամբ), փորձում էր հիմնավորել, որ XIX դ. կեսերից ի վեր այդպիսի տնտեսական աճի

---

[1] *Экономика знаний: коллективная монография, отв. ред. Колесов В. П., М., 2008, с. 413.*

[2] *Տե՛ս* http://ec.europa.eu./education/policies/lll/life/index_en.html

գլխավոր գործոնը դարձել է գիտատեխնիկական առաջընթացը[3]: Այդուհանդերձ, ինչպես վկայում է զարգացած երկրների տնտեսական պատմությունը, մինչև XX դ. վերջը գիտելիքը գործնականում հանդես է եկել որպես զարգացման՝ կապիտալը համալրող գործոն: Ուսումնասիրությունները փաստում են, որ զարգացած երկրներում XVII-XVIII դդ. մարդկային կապիտալի բաժինը ընդհանուր կապիտալի մեջ չէր հասնում 10 %-ի: XIX դ. սկզբին այն գերազանցեց 20 %-ը, իսկ XX դ. սկզբին՝ 30%-ը: Սակայն դրա առավել սրընթաց աճը նկատվում է XX դ. երկրորդ կեսից ի վեր՝ չորս-հինգ տասնամյակի ընթացքում գրեթե կրկնապատկվելով և դարի վերջին հասնելով արդեն 70 %-ի[4]:

Գիտելիքն, այսպիսով, երկրորդ պլան է մղում արտադրության ավանդական գործոնները՝ հողը, կապիտալը, աշխատանքը և, ինչպես ընդգծում է Պ. Դրաքերը, վերածվում է արտադրողական գլխավոր ուժի: Նրա պնդմամբ, հետկապիտալիստական հասարակության մեջ գիտելիքն ու տեղեկատվությունը՝ որպես տնտեսական աճի ոչ ավանդական գործոններ, գնալով ավելի մեծ բաժին են զբաղեցնելու ավելացված արժեքի մեջ՝ դառնալով ազգային հարստության գլխավոր աղբյուրը[5]: Այսպիսի փոփոխություններն, ըստ էության, վկայում են տնտեսության և հասարակության հետագա լայնածավալ հումանիզացման համար անհրաժեշտ նախադրյալների ձևավորման մասին: Սակայն դրանք մինչև վերջ չեն կարող բացատրվել շուկայական համակարգի վերաբերյալ համընդունելի տեսական կանխադրույթներով, այսինքն՝ դուրս են գտնվում ժամանակակից էկոնոմիքսի տրամաբանությունից: Սոցիալ-տնտեսական առաջընթացի արդի միտումները բացահայտելու համար հարկ է քննարկել և համադրել շուկայական տնտեսության տարբեր հայեցակերպերը, ինչպես նաև՝ տնտեսական համակարգին պետության միջամտության (կամ որ ավելի ճիշտ է՝ մասնակցության) նպատակներն ու եղանակները գիտելիքահենք տնտեսության պայմաններում:

Տնտեսագիտության տեսության մեջ ձևավորված մեթոդաբանական մոտեցումների համաձայն, իհարկե, որոշ պայմանականությամբ, կարելի է առանձնացնել շուկայական տնտեսության երեք հայեցակերպ՝ սմիթյան, շումպետերյան և բաումոլյան: Սմիթյան տնտեսության մեջ մրցակցային մեխանիզմի շնորհիվ ապահովվում է այնպիսի կայուն, երկարաժամկետ հավասարակշռություն, որի պայմաններում շուկայական պահանջարկը հավասար է առաջարկին, գինը՝ սահմանային ծախքերին, իսկ իրացումից ստացված հասույթը լիովին փոխհատուցում է արտադրության ընդհանուր ծախքերը: Կառավարությունը՝ որպես տնտեսական սուբյեկտ, անհատի

---

[3] *Տե՛ս* **Kuznets S.** *Modern Economic Growth, Harvard University Press, 1969,* **նույնի՝** *Economic Growth of Nations, Harvard University Press, 1971.*

[4] *Տե՛ս* **Рогов С. М.** *Государство и общественное благо: мировые тенденции и российский путь, М., 2005, с. 71.*

[5] *Տե՛ս* **Drucker P.** *Post-capitalist Society. N. Y., 1993, p. 86.*

համար պարզապես նպաստավոր պայմաններ է ստեղծում նրա անձնական շահի իրացման համար, իսկ շուկայի «անտեսանելի ձեռքն» ինքնըստինքյան կապահովի բնականոն տնտեսական աճը: Հասկանալի է, որ ավանդական շուկայական համակարգում տնտեսական բարիքների մեծագույն մասն արտադրվում է սմիթյան տնտեսության մեջ:

Շումպետերյան տնտեսության[6] մեջ արտադրվում են տնտեսա-կան յուրահատուկ բարիքներ (տեղեկատվություն, նորամուծություն, մշակույթի, կրթության, գիտության ոլորտների արտադրանք), որոնց գները բարձր են սահմանային ծախքերից: Այդպիսի ապրանքների ու ծառայությունների առանձնահատկությունն այն է, որ դրանք արտադրվում են որպես սովորական (բաժանելի, բացառելի) արտադրանք, բայց ի վերջո վերածվում են հասարակության մտավոր – մարդկային զարգացման ներուժի, դառնում են հանրային բարիք, այսինքն՝ դրա ամեն մի հաջորդ, լրացուցիչ սպառողը («սահմանային» սպառողը) չի ավելացնում դրա ստեղծման ծախքը: Հետևաբար, այդպիսի տնտեսության մեջ առկա են ոչ միայն տնտեսական, այլև՝ սոցիոհումանիստական արդյունքներ:

Բաումոլյան տնտեսության[7] մեջ արտադրվող և սպառվող բարիքները տառապում են «գների հիվանդությամբ»: Գիտության, մշակույթի, կրթության ոլորտներում մի շարք բարիքների արտադրության ծախքերն օբյեկտիվորեն ավելին են, քան շուկայում դրանց իրացումից ստացված հասույթը, այսինքն՝ դրանց գները ցածր են սահմանային ծախքերից: Ուստի, հասարակայնորեն անհրաժեշտ չափերով այդպիսի բարիքների արտադրությունը մշտապես կպահանջի պետության աջակցությունը: Այդուհանդերձ, հարկ է ընդունել, որ առանց բաումոլյան տնտեսության «չեն կարող լույս աշխարհ գալ» շումպետերյան տնտեսության բազմաթիվ բարիքներ, որոնք ապահովում են կյանքի բարձր որակը հասարակության մեջ: Խոսքը վերաբերում է ոչ միայն մտավոր աշխատանքի նշանակության հասարակական ընկալմանը, անհատի հոգևոր-մշակու-թային զարգացման կարևորմանը, կրթության և գիտական հետազոտությունների պատշաճ գնահատմանը, այլև՝ արտադրական-տնտեսական գործունեության տեղեկացվածության անհրաժեշտ մակարդակի ապահովմանը՝ գերժամանակակից

---

[6] *Ներկայումս բազմաթիվ տնտեսագետներ, անկախ հայեցակարգային սկզբունքներից, ի պատիվ ամերիկացի մեծանուն տնտեսագետ Ժոզեֆ Շումպետերի, նրա անունով են կոչում հետարդյունաբերական հասարակության տնտեսակարգը (տե՛ս, օրինակ՝* **Макаров В. Л.** *Экономика знания: уроки для России. Доклад на президиуме РАН, М., 2002,* **Нельсон Р., Уинтер С.** *Эволюционная теория экономических изменений, М., 2002,* **Гринберг Р. С., Рубинштейн А. Я.** *Государство в экономике знаний (Экономика знаний, отв. ред. Колесов В. П., с. 359-374)*:

[7] *Հասկացությունը կապված է ամերիկացի տնտեսագետ Ուիլյամ Բաումոլի անվան հետ, որը 1960-ականի կեսերին ախտորոշեց «գների հիվանդությունը» (տե՛ս* **Baumol W. J., Bowen W.G.** *Performing Arts: The Economic Dilemma, N. Y., The Twentieth Century Fund, 1966):*

տեխնոլոգիաների լայնամասշտաբ կիրառման և ՀՆԱ-ի տեղեկատվական բաղադրիչի տեսակարար կշռի բարձրացման ճանապարհով:

Վերոնշյալ խնդիրների լուծման առաջնահերթությունները սահմանելու և առաջադրվող նպատակներին հասնելու գործում առանցքային դեր ունի ժամանակակից պետությունը: Իհարկե, շուկայական համակարգում պետության գործուն միջամտությունը, իշխանության չարաշահումից զատ, կարող է հանգեցնել նաև ռեսուրսների անարդյունավետ տեղաբաշխման և/կամ օգտագործման: Կարելի է կարծել, թե մասնավոր ձեռներեցությունն ու շուկայական մեխանիզմն իրոք որ ավելի գերադասելի են: Սակայն, ինչպես արդեն անհերքելիորեն ապացուցված է, շուկան ևս «սխալական է», «անմեղ» չէ: Բախվելով անկատար մրցակցությանը, տեղեկատվական անհամաչափությանը, գործարքային ծախքերին, կողմնակի արդյունքներին և այլն՝ շուկայական մեխանիզմը հայտնվում է տեղապտույտի մեջ և, չկարողանալով բավարարել իր իսկ առաջադրած պայմանները, հաճախ ստեղծում է ռեսուրսների անարդյունավետ տեղաբաշխում:

«Շուկայի համատարած սխալների» դաշտում է արտադրվում, պահպանվում, փոխանցվում ու բազմապատկվում նաև հետարդյունաբերական հասարակության գլխավոր արտադրողական ուժը՝ գիտելիքը: Բայց եթե շուկան միայնակ ի վիճակի չէ «վարելու» այդ դաշտը, ապա նրան համալրողը կարող է լինել միայն պետությունը, և հենց այստեղ կարող է և պետք է կյանքի կոչվի շուկայի և պետության համակեցությունը: Նախքան այդ համակեցության առանձնահատկություններին անդրադառնալը, հարկ է հստակեցնել գիտելիքահենք տնտեսության տարբերակիչ հայտանիշը, նրա գործունակության ու կենսունակության առանցքային մեխանիզմը: Վերջինիս էությունն ամփոփվում է «տնտեսական աճի հումանիստական բազմապատկիչ» հասկացությամբ: Խոսքը մի մեխանիզմի մասին է, որն ապահովում է ազգային հարստության շեշտակի աճը՝ շնորհիվ այն բանի, որ կուտակված գիտատեխնիկական ներուժն օգտագործվում է որպես բնատուր արտադրողական ուժ, «չվատնվող» ռեսուրս: Այդ մեխանիզմի «զորությունն» անհամեմատ զգալի է շումպետերյան տնտեսության մեջ, որտեղ գերակա դեր են խաղում մարդկային կապիտալը և մարդկանց մտավոր գործունեության արդյունքները՝ գիտելիքները: Հենց նման պայմաններում է ի հայտ գալիս մարդկային գործունեության արդյունքների բազմապատիկ սպառողական արդյունքը, երբ գիտելիքների պաշարից ամեն մի նոր օգտվող ամենևին էլ չի ավելացնում այդ ռեսուրսի արտադրության ծախքը (բնության հարատև պարգևից, օրինակ՝ արեգակի ջերմությունից, օգտվելիս): Եվ դա պայմանավորված է այն հանգամանքով, որ գիտելիքն ի սկզբանե հանրային բարիք է, որի բնութագիրն ամփոփվում է հետևյալ բանաձևով. բարիքն սպառողների քանակի ավելացումից առաջացող լրացուցիչ (սահմանային) ծախքերը հավասար են զրոյի:

Նյութական սահմանափակ ռեսուրսներ տնօրինող ավանդական աշխատանքահենք տնտեսության պայմաններում տնտեսական աճի հումանիստական բազմապատկումը սկզբունքորեն հնարավոր չէ: Սակայն իրավիճակն արմատապես փոխվում է, երբ գիտելիքն ու նորամուծությունը դառնում են հասարակական արտադրութ- յան «տանող ուժը»: Այդպիսի «որակական թռիչքը» արդյունաբե- րական քաղաքակրթությունից հետարդյունաբերականին անցման սկզբնակետն է, և այդ պահը մեծապես կախված է պետության ակտիվությունից, գիտելիքահենք տնտեսությանն անհրաժեշտ ինստիտուտների ստեղծման հետևողականությունից:

Գիտահետազոտական գործունեության արդյունքները սովորաբար միանգամից չեն վերածվում զարգացման գլխավոր գործոնի հավակնող ստեղծագործ արտադրողական ուժի: Արդյունաբերական-շուկայական համակարգի պայմաններում հիմնարար և կիրառական գիտության արգասիքների արտադրության ծախքերը հաճախ գերա- զանցում են դրանց իրացումից ստացված եկամուտը: Այդպիսի բարիքների արտադրությունը պետք է հովանավորի պետությունը, որի կատարած ծախսումներն ամբողջովին կփոխհատուցվեն տնտեսական աճի հումանիստական բազմապատկչի գործարկմամբ: Հասկանալի է, որ անցումային շրջանում առաջացած օբյեկտիվ և սուբյեկտիվ բարդությունների պատճառով պետության հնարավորությունները չափազանց սահմանափակ են: Սակայն ակնհայտ է և այն, որ զարգացման նոր փուլ թևակոխելու այլընտրանք պարզապես գոյություն չունի: Ուստի և՝ «հանրային սուղ միջոցները չվատնելու» երեսպաշտական հարցադրումների փոխարեն ժամանակն է սահմանելու սկզբունքորեն նոր առաջնահերթություններ՝ հիմնված գիտության վրա կատարվող ծախսումների ոչ այլընտրանքային բնույթի ընկալման վրա:

Շուկայական տնտեսության ժամանակակից էվոլյուցիան, որը զարգացման «լոկոմո- տիվի» դերը վերապահում է մարդկանց ստեղծարար աշխատանքին ու գիտելիքներին, առաջ է քաշում ոչ միայն գործնական, այլև տեսական բնույթի մի շարք բարդ՝ մեթոդաբանական լուծումներ պահանջող հիմնախնդիրներ: Նախ, կասկածելի է դառնում մեթոդաբանական անհատականացման կանխադրույթը, ըստ որի, հասարակության պահանջմունքների բովանդակությունը հանգեցվում է առանձին անհատների նախապատվություններին: Երկրորդ, միանգամայն անիրատեսական հնչեղություն է ձեռք բերում ռեսուրսների սահմանափակության կանխադրույթը: Չէ՞ որ դրա համաձայն, տնտեսական բոլոր բարիքները դիտարկվում են բացառապես մրցակցային պայքարի լույսի ներքո՝ նվազող սահմանային օգտակարության օրենքի գործողության պայմաններում դրանց այլընտրանքային օգտագործման հնարավորու- թյունների հաշվառմամբ: Երրորդ, ոչ լիարժեք բովանդակություն է ձեռք բերում նաև աշխատանքի ռեդուկցիայի կանխադրույթի նորդասական մեկնաբանությունը, քանի որ վերջինս աշխատանքը բնորոշում է սոսկ որպես արտադրության գործոն՝ հաշվի

չառնելով դրա՝ մարդկային կապիտալի նոր որակ ձեռք բերելու էվոլյուցիոն հնարավորությունը:

Դեպի գիտելիքահենք շուկայական տնտեսություն առաջընթացն ստիպում է հրաժարվել մեթոդաբանական անհատականացման սկզբունքի համընդհանրությունից և այն փոխարինել շատ ավելի ընդունելի՝ անհատական և սոցիալական օգտակարության փոխլրացման կանխադրույթով: Սա արմատապես կփոխի նաև շուկայի մասնակիցների կազմի և պետության տնտեսական դերի վերաբերյալ պատկերացումները: Պետությունը կդիտարկվի որպես շուկայի ինքնուրույն մասնակից, որը ձգտում է առավելագույնի հասցնել սոցիալական օգտակարությունը արդիականացվող տնտեսական հարաբերությունների պայմաններում:

Տնտեսագիտության ժամանակակից դասագրքերում, ինչպես նաև համապատասխան ուղղվածության հետազոտություններում, ամենայն որոշակիությամբ ներկայացվում են այն դեպքերը, երբ շուկան ի վիճակի չէ ապահովել ռեսուրսների արդյունավետ բաշխում, և շուկայի «սխալներն» ստիպված է ուղղել պետությունը: Վերլուծելով պետության ներկայիս վերաբաշխիչ գործառույթները՝ դժվար չէ եզրակացնել, որ գործնականում «դե-ֆակտո» խախտվել է նորդասական տեսության հիմնարար սկզբունքներից մեկը՝ պետության միջամտությունը, որը բազմաթիվ նկատառումներով պայմանավորված, հաճախ չի բխում առանձին անհատների շահերից, իսկ երբեմն էլ ուղղակիորեն հակասում է դրանց, ինչն էլ հենց պահանջում է վերանայել անհատականացման արմատական կանխադրույթը: Այնպես որ, դիտարկելով պետության մասնակցության ընդլայնումը տնտեսության առջև ծառացած խնդիրների լուծման մեջ, մանավանդ տնտեսական ճգնաժամի պայմաններում, հազիվ թե հնարավոր լինի դա շաղկապել մասնավոր անձանց շահերի հետ: «Նվազագույն պետության» տեսական կարծրատիպն այստեղ բացահայտ հակասության մեջ է շուկայական տնտեսության պայմաններում նրա ունեցած փաստացի դերակատարման հետ: Մի՞թե ակնհայտ չէ, որ դրա հետևում թաքնված է անհատական նախապատվություններից դուրս գտնվող հասարակական շահը: Իսկ եթե դա այդպես է, ապա կձևավորվի խառը տնտեսության միանգամայն նոր ընկալում, ինչը նոր մեթոդաբանական հիմք է գիտելիքահենք տնտեսության իմաստավորման համար:

Նկատի առնելով շուկայական համակարգում հանրային բարիքների, իսկ դրանց շարքում՝ գիտության արգասիքների, աճի օբյեկտիվ օրինաչափությունը՝ անհրաժեշտ է ընդունել, որ ռեսուրսների սահմանափակության «անառարկելի» կանխադրույթն սկսել է արգելակել տնտեսագիտության տեսության զարգացումը: Այլ կերպ ասած՝ տնտեսական տարածությունը, որի համար կիրառելի է այդ կանխադրույթը, շարունակաբար և արագ կրճատվում է: Դրա փոխարեն ստեղծվում է այլ տնտեսական

տարածություն, որտեղ անհատական և հասարակական պահանջմունքները բավարարող բարիքների արտադրությունը տեղի է ունենում որոշակի առումով անսահմանափակ ռեսուրսների միջոցով:

Սահմանափակ և անսահմանափակ ռեսուրսներով տնտեսական տարածությունների հստակ սահմանազատման համար անհրաժեշտ է հաշվի առնել այն պայմանները, որոնցում տեղի են ունենում գիտելիքների արտադրության, տարածման և օգտագործման գործընթացները: Ընդսմին, այդ գործընթացները միմյանցից տարբերվում են ոչ միայն նրանով, որ դրանցից մեկը վերաբերում է բառումոյան, իսկ մյուսը՝ շումպետերյան տնտեսությանը. չնայած գիտելիքն ի սկզբանե անբացառելի, իսկ օգտագործման ժամանակ՝ ոչ մրցակցային, «չհատնող» բարիք է, իր արտադրության փուլում այն դեռևս տնտեսական ռեսուրս չէ: Որպեսզի գործնականում այն վերածվի տնտեսական ռեսուրսի, պետք է սկսի գործել տնտեսական աճի հումանիստական բազմապատկիչը, ինչն իրականություն կարող է դառնալ գիտելիքի էվոլյուցիայի հաջորդ՝ տարածման և հատկապես օգտագործման փուլերում: Ավելին, սկզբնական շրջանում գիտելիքի ժառանգական հատկություններն արգելք են դառնում դրա արտադրության և տարածման համար, և միայն այն ժամանակ, երբ գիտելիքը դառնում է համամատչելի, անհրաժեշտ պայմաններ են ստեղծվում դրա զանգվածային կիրառության համար: «Բավարա՞ր են արդյոք այդ պայմանները, թե՞ ոչ» հարցի պատասխանը կախված է նրանից, թե արդյոք ձևավորվե՞լ է համապատասխան ինստիտուցիոնալ միջավայրը, որն ապահովելու է անհատների ստեղծարար հակվածության և կուտակված գիտելիքների միատեղումը: Սա նշանակում է, որ շուկայական համակարգում զրոյական սահմանային ծախքերով անսահմանափակ ռեսուրսի օգտագործումը դրա սպառողների շրջանում ցանկություն կառաջացնի թաքցնելու իրենց փաստացի պահանջմունքն այդ ռեսուրսի նկատմամբ, ինչը կմարի արտադրողի՝ այդպիսի ռեսուրս ստեղծելու ցանկությունը[8]: Իրերի այսպիսի դրվածքն անվերապահորեն հանգեցնում է այն մտքին, որ անհրաժեշտ է գործուն միջամտություն գիտելիքի էվոլյուցիայի գործընթացին՝ հումանիստական բազմապատկման արդյունք ապահովելու նպատակով: Խնդիրն, այսպիսով, հանգում է շուկայի ամենատարածված ձախողումներից մեկի՝ «անտոմսի» հիմնահարցի լուծմանը: Իսկ այստեղ տեսությունն ասում է միայն մի բան՝ հնարավորության դեպքում անբաժանելի, անբացառելի (հանրային) բարիքը պետք է դարձնել բաժանելի, բացառելի (անհատական): Գիտելիքի՝ որպես տնտեսական ռեսուրսի պարագայում դա կարող է տեղի ունենալ, եթե նրա ծագումնաբանական հատկությունը չեզոքացվի էվոլյուցիայի առաջին փուլում՝ պայմանով, որ այն վերականգնվի ավարտական – կիրառական փուլում: Այս

---

[8] *Անհատների՝ հանրային բարիքների նկատմամբ պահանջարկի կեղծ ազդանշան հնչեցնելու հակումը մեկնաբանել է դեռևս Պոլ Սամուելսոնը ավելի քան կես դար առաջ (տե՛ս* **Samuelson P. A.** *The Pure Theory of Public Expenditure (Review of Economics and Statistics, 1954):*

կապակցությամբ թե՛ տեսական-մեթոդաբանական և թե՛ գործնական լուծումների առումով ծառանում է մի բարդ խնդիր՝ սկզբունքորեն կատարելագործել գոյություն ունեցող ինստիտուտները կամ ստեղծել նորերն[9] այն հաշվով, որ դրանք կարողանան ապահովել ստեղծվող գիտելիքի անհատականացումը՝ հետագայում վերականգնելով դրա համամատչելիությունը:

Լուծելի՞ է արդյոք այդ խնդիրը, և եթե այո՝ ո՞վ պետք է լուծի այն: Պետության և շուկայի փոխառնչությունների ժամանակակից համակարգը թույլ է տալիս պնդելու, որ խնդիրը ոչ միայն լուծելի է, այլև հանրային շատ բարիքների դեպքում (ճանապարհներ, շինություններ, մշակույթի և կրթության ոլորտների արտադրանք և այլն) դժվարությամբ, այնուամենայնիվ, լուծվում է, և եթե ոչ անմիջականորեն պետության միջոց(ներ)ով, ապա՝ պետության նախաձեռնությամբ ու հովանավորությամբ ձևավորված ինստիտուտների «գործարկման» շնորհիվ: Պետությունը «հարկադրված» է ապահովել մի շարք անսահմանափակ ռեսուրսների (օրինակ՝ հիմնարար գիտության արգասիքների) արտադրությունը և/կամ ձևավորել այնպիսի միջավայր, որն այդ բարիքներին վերապահում է մասնավոր սեփականության իրավունք՝ դրանով իսկ ներգրավելով շուկայական հարաբերությունների մեջ:

Անհրաժեշտ է ի սկզբանե ընդունել, որ ստեղծագործական աշխատանքն ու դրա արգասիքները գերազանցապես հումանիստական բարիքներ են, որոնք ունեն ոչ միայն անհատական, այլև՝ սոցիալական օգտակարություն, այսինքն՝ հասարակության պահանջմունքները բավարարելու հատկություն: Հետևաբար, այդ բարիքների իրական արժողության մեջ առկա է սոցիալական բաղադրիչ, ինչը պատշաճ արտացոլում չի գտնում տիրապետող արժեքային չափումներում: Այդ բաղադրիչը մարդկային կապիտալն է, իսկ դրա մեջ՝ ներուժային առավել մեծ արժեք ունեցող մտավոր կապիտալը: Ճիշտ է, վերջին մեկ-երկու տասնամյակի ընթացքում մտավոր կապիտալի գնահատման հարցը կարևորվում է ինչպես տեսական (մարդկային զարգացման հայեցակարգ), այնպես էլ՝ գործնական (կազմակերպությունների ոչ նյութական ակտիվների արժեքի հաշվարկ) առումներով, սակայն չափման մեթոդների վերաբերյալ դեռևս ավարտուն ու միասնական պատկերացում չի ձևավորվել: Այսպես թե այնպես, կիրառվող մոտեցումներում արդեն նկատելի են որոշակի ընդհանուր գծեր, որոնք կարող են օգտագործվել նաև ստեղծագործական աշխատանքի սոցիալական բաղադրիչի արժեքային գնահատման սկզբունքների հստակեցման համար: Կատարված վերլուծությունների հիման վրա կարող ենք եզրակացնել, որ ժամանակակից շուկայական համակարգում ստեղծագործական աշխատանքի

---

[9] *Շուկայական բարեփոխումների տեսությանը նվիրված որոշ հետազոտություններում արդեն իսկ առաջարկվում են ինստիտուտների ձևավորման՝ սկզբունքորեն նոր մոտեցումներ (տե՛ս, օրինակ,* **Полтерович В. М.** *Стратегии институциональных реформ, М., 2005), որոնք կարող են առավել արդյունավետ լինել նոր տնտեսության պայմաններում:*

արժեքային գնահատման խնդիրն իրապաշտ լուծումներ կունենա հետևյալ սկզբունքների պահպանման դեպքում:

Սկզբունք 1: *Պետությունը՝ որպես շուկայի ինքնուրույն մասնակից, բարիքների սոցիալական օգտակարության հետ է փոխանակում իր տնօրինության տակ գտնվող ռեսուրսները*[10]*: Եթե նկատի առնենք, որ ստեղծագործական աշխատանքը կրողը միաժամանակ նաև համապատասխան արդյունք արտադրողն է, ապա նա, վաճառելով իր գործունեության արդյունքը, դրանով իսկ ստեղծված սոցիալական օգտակարությունը փոխանակում է պետության ֆինանսական միջոցների հետ: Պետությունն իր միջոցները ներդնում է գիտելիքների, ընդհանուր ընդգրկմամբ՝ մտավոր կապիտալի կուտակման մեջ՝ հասարակության սոցիալական միջավայրի բարելավումից ակնկալելով թե՛ տնտեսական, թե՛ հումանիստական արդյունք: Չի կարելի անտեսել մի կարևոր հանգամանք ևս. որպես կանոն՝ մշակութային, կրթական, գիտական ոլորտներում ստեղծագործական աշխատանքն իր մեջ կրում է նաև համապատասխան բարիքների ստեղծման տեխնոլոգիաները, որոնք անբաժան են մարդուց, նրա էությունից: Եվ այս առումով գիտնականը, մանկավարժը, արվեստագետը, ստեղծագործական աշխատանքի այլ ներկայացուցիչներ ոչ միայն իրենց աշխատանքի ունակության (մտավոր աշխատուժի), այլև այդ աշխատանքի արդյունքների սեփականատերերն են: Նրանց են պատկանում իրենց իսկ ստեղծած մտավոր ունեցվածքի օգտագործման իրավունքները:*

Սկզբունք 2: *Մտավոր սեփականության իրավունքների արժեքը որոշվում է այն եկամտով, որն ստացվում է կամ հնարավոր է ստանալ այդ իրավունքների օգտագործումից*[11]*: Ընդ որում, նշված իրավունքների արժեքը որոշվում է այն շուկայում, որտեղ դրանց իրացումից կստացվի առավելագույն եկամուտ, այսինքն՝ կպահպանվի լավագույն օգտագործման պայմանը: Այս մոտեցմամբ գործնականում հնարավոր է հասնել խնդրի լուծմանը, այն է՝ գնահատել մտավոր սեփականության օգտագործման իրավունքները համապատասխան շուկաներում: Սա արդեն այն անհրաժեշտ նախադրյալն է, որը կարող է հիմք ծառայել միանգամայն որոշակի հաշվարկների իրականացման համար:*

Սկզբունք 3: *Ստեղծագործական աշխատանքը գնահատվում է ըստ դրա կիրառելիության լավագույն պայմանների*[12]*: Այստեղ հաշվի է առնվում այն փաստը, որ*

---

[10] *Սույն գաղափարը զարգացնում են տնտեսական սոցիոդինամիկայի տեսաբանների վերլուծություններում (տե՛ս* **Гринберг Р. С., Рубинштейн А. Я.** *Экономическая социодинамика, М., 2000,* **Рубинштейн А. Я.** *К вопросу расширения "чистой теории общественных расходов", М., 2007,* **Рубинштейн А. Я.** *Человеческий капитал и реформы нового времени, М., 2007):*

[11] *Սույն դրույթը բխում է Մոդելիանի-Միլլերի թեորեմից (տե՛ս* **Козырев А. Н., Макаров В. Л.** *Оценка стоимости нематериальных активов и интеллектуальной собственности, М., 2003, с. 45):*

[12] *Տե՛ս* **Чихун Л. П.** *Знание как глобальное общественное благо (Экономика знаний, отв. ред. Колесов В. П., с. 375-383).*

գլոբալացման և տեղեկատվական հասարակության կայացման պայմաններում, երբ աշխատանքային ընդհանուր ծախսումների մեջ ստեղծագործական աշխատանքը դառնում է գերակշռող, որակափոխության է ենթարկվում նաև այդպիսի աշխատանքը. այն ձեռք է բերում կապիտալին բնորոշ առանձնահատկություններ: Իսկ այս նոր որակի մեջ ստեղծագործական աշխատանքի վրա ևս կտարածվի ընդհանրապես կապիտալին ներհատուկ օրինաչափությունը՝ «հոսել» դեպի այն արտադրաճյուղերը, անկախ ոլորտից ու վայրից, որոնցում կապահովվի ավելի մեծ հատույց: Հասկանալի է, որ գիտելիքահենք տնտեսության կայացման, գլոբալացման և ազգային սահմանների վերացման պայմաններում առաջին հերթին ստեղծագործական աշխատանքին է հաջողվում թափանցել այնտեղ, որտեղ դրա կիրառման համար ձևավորված են առավել նպաստավոր պայմաններ: Արդյոք հենց սա չէ՞ «ուղեղների արտահոսքի» ժամանակակից գործընթացների գլխավոր դրդապատճառը: Հարցի պատասխանն ակնհայտ է՝ իհարկե, այո՛:

Շուկայական համակարգի նման էվոլյուցիան պետության տնտեսական գործունեության մեջ պետք է որ ձևավորեն երեք գլխավոր ուղղություն: Առաջին, ստեղծագործական աշխատանքի արդյունքների «անտոմս» սպառման հակումը չեզոքացնելու և այդպիսի աշխատանքի տնտեսական խթանումն ապահովելու նպատակով պետությունը պետք է հետևողականորեն ձևավորի և զարգացնի մտավոր սեփականության ինստիտուտները: Դրա շնորհիվ նոր գիտելիքները և ընդհանրապես ի սկզբանե անհատական ու սոցիալական օգտակարություն ունեցող բոլոր հանրային բարիքները կներառվեն շուկայական ապրանքափոխանակության ոլորտ, իսկ դրանց համար ձևավորված գնի մակարդակը կպայմանավորի համապատասխան ստեղծագործական աշխատանքի արժեքային գնահատումը:

Երկրորդ, հաշվի առնելով վերոնշյալ բարիքների ազգային-տեղային շուկաների թերզարգացածությունը՝ պետությունը պետք է առավել լայն ընդգրկմամբ կիրառի կառուցվածքային քաղաքականության լծակները (սուբսիդիաներ, նպատակային ֆինանսավորում, հարկային արտոնություններ և այլն): Սատարելով տնտեսության առանձին ոլորտների զարգացումը (առանձին նորարարական ծրագրերի կենսագործումը)՝ պետությունը դրանով իսկ ազգային-տեղային շուկաներում թերագնահատված ստեղծագործական աշխատանքի համար ապահովում է գնահատում՝ ըստ դրա օգտագործման լավագույն պայմանների. այնպես, ինչպես այն գնահատվում է տվյալ բնագավառում առաջատար համարվող երկրների շուկաներում: Ընդ որում, սկզբնական փուլում, երբ տեղեկատվական արտադրանքի շուկայական պահանջարկը դեռևս անբավարար է, պետությունն ինքն է լրացուցիչ պահանջարկ ներկայացնում դրա նկատմամբ: Այդ կերպ սատարելով տվյալ ոլորտի զարգացումը՝ պետությունը նաև սպառողներին է ստիպում հանրային բարիքն սպառել միևնույն ծավալով, անկախ նրանց անհատական պահանջմունքից (օրինակ, բարձրագույն

կրթության ոլորտում կիրառվող պետական կրթական չափորոշիչներն, անկախ անձնական նախասիրություններից, ուսանողին պարտադրում են յուրացնել տվյալ մասնագիտու- թյան գծով հաստատված չափորոշչի բոլոր դասընթացները): Դա կը- նպաստի տեղեկատվական ծառայությունների առաջարկի ընդհանուր աճին, որն, իր հերթին, կառաջացնի լրացուցիչ պահանջարկ տնային տնտեսությունների և տնտեսվարող սուբյեկտների կողմից:

Երրորդ, քանի որ պետությունը չի մասնակցում շուկայական փոխանակությանը, բայց սոցիալական օգտակարությամբ օժտված մի շարք բարիքների (օրինակ՝ հիմնարար գիտության արգասիքների) միակ սպառողն է, ուստի նա այդպիսի բարիքներն ստեղծողների աշխատանքի վարձատրության մակարդակը պետք է սահմանի՝ հիմք ընդունելով նույն՝ ստեղծագործական աշխատանքն ըստ կի- րառության լավագույն պայմանների գնահատման սկզբունքը, ինչը կնպաստի մտավոր աշխատանքի եկամտաբերության բարձրացմանը և, վերջին հաշվով, հասարակական հարստության վերաբաշխմանը՝ հօգուտ «ուղեղատար» բարիքներ ստեղծողների:

Գիտելիքահենք տնտեսությանն անցման պայմաններում պետության տնտեսական գործունեության արդյունավետությունը կապված է կառուցվածքային նոր քաղաքա- կանության մշակման և իրականացման խնդրի հետ: Իսկ ի՞նչ սկզբունքներ և չափանիշներ պետք է դրվեն պետության կառուցվածքային քաղաքականության գերակայությունների ընտրության հիմքում: Սույն հարցադրումը, սակայն, հաճախ պատշաճորեն չի կարևորվում (հատկապես անցումային տնտեսությամբ երկրներում), քանի որ «դեմ է առնում» հետևյալ առարկությանը. կառուցվածքային քաղաքականու- թյան գերակայությունների ընտրության՝ գործնականում կիրառվող չափանիշներն աչքի չեն ընկնում անաչառության բավարար աստիճանով, անկատար են դրանց բացա- հայտման և սահմանման մեխանիզմնե-րը, իսկ հասարակական ընտրության տեսությունից քաջ հայտնի «քվեարկության պարադոքսը» միշտ տեղ է թողնում կողմնակալության, խմբային, կլանային կամ տեղային շահերի գերակշռության և անարդյունավետություն ծնող այլ բացասական երևույթների առաջացման համար:

Պատրանքների գիրկը չընկնելու համար, իհարկե, անհրաժեշտ է ի սկզբանե ընդունել, որ սկզբունքորեն հազիվ թե հնարավոր լինի ձևավորել կառուցվածքային քաղաքականության գերակայությունների որոշման կատարյալ, սուբյեկտիվ նկրտումներից զերծ համակարգ: Ինչպես որ չի կարող գոյություն ունենալ կատարյալ շուկա, որը կապահովի ռեսուրսների օպտիմալ տեղաբաշխում, այդպես էլ չի կարող լինել կատարյալ «տնտեսական պետություն», որի գործունեության արդյունավետությունը երաշխավորված կլինի հասարակական պահանջմունքների հիերարխիայի սահմանման ու բավարարման անթերի, անվերապահ, գիտականորեն հիմնավորված մեխանիզմով: Եվ այստեղ թերևս հարկ է առաջնորդվել առաջին հա- յացքից «դժվարամարս» մի կանոնով. «պետության սխալներն» ամենևին էլ ավելի վատ

հետևանքներ չեն ունենում, քան «շուկայի սխալները»: Պարզապես, որքան ավելի ժողովրդավարական է հասարակությունը, այնքան ավելի արագ ու հեշտ կբացահայտվեն և կուղղվեն այն սխալները, որ տեղ են գտել պետական գերակայությունների սահմանման հարցում:

Առավել անընդունելին այն է, որ պետությունն ընդհանրապես հրաժարվում է կառուցվածքային գերակայությունների ընդունումից՝ «դիմակավորվելով» տնտեսական ազատության կեղծ գաղափարով: Այդ պայմաններում ձևավորված «ազատական տնտեսությունը», հատկապես իր սոցիալական ու բարոյահոգեբանական ազդակներով, շատ ավելի անընդունելի է, քան այն տնտեսությունը, որի կառուցվածքային փոփոխություններին առնչվող հասարակական պահանջմունքները հստակ ձևակերպվում են պետության գործադիր և օրենսդիր մարմինների կողմից, եթե նույնիսկ հետագայում դրանց ճշգրտումը կդառնա ժամանակի անհրաժեշտություն:

Շուկայական տնտեսության գիտելիքահենք էվոլյուցիայի արդի փուլում պետության դերի փոփոխությունը մեծապես պայմանավորված է նաև տնտեսական գլոբալացման ժամանակակից գործընթացների բնույթով: Աշխատանքի միջազգային բաժանման խորացման պայմաններում տեխնիկապես բարդ գիտատար արտադրանքի թողարկումը և գիտելիքահենք տեխնոլոգիաների յուրացումը պահանջում են տարբեր երկրների ընկերությունների կապիտալային, տեխնիկական ու տեղեկատվական միջոցների միավորում: Այս պայմաններում օբյեկտիվ անհրաժեշտություն է դառնում մտավոր աշխատանքի արգասիքների միջազգային փոխանակությունը, որը կարող է իրականացվել ինչպես առևտրային, այնպես էլ՝ ոչ առևտրային հիմունքներով, և որի մասնակիցներն են ինչպես անհատներն ու ֆիրմաները, այնպես էլ՝ պետությունները[13]: Բայց սա նշանակում է նաև, որ գիտելիքը, հատելով ազգային սահմանները, վերածվում է գլոբալ բարիքի, ինչից առաջին հերթին օգուտներ են «քաղում» այն արտադրող երկրները:

Անկախ այն բանից, թե գիտելիքն սկզբնապես ստեղծվել է որպես ազգայի՞ն թե՞ միանգամից՝ որպես գլոբալ հանրային բարիք, այն՝ որպես այդպիսին, ունի հետևյալ առանձնահատկությունը. դրա օգտագործումը համաշխարհային հանրության կողմից բազմակի գերազանցում է այն օգուտները, որ ազգային տնտեսության մասշտաբով ստացվում են գիտելիքի օգտագործումից: Զարգացման տեխնոլոգիաների ներառումը գլոբալ հանրային բարիքների թվում էապես ուժեղացնում է տնտեսական աճի հումանիստական բազմապատկման ազդեցությունը: Այս առումով Համաշխարհային բանկի՝ «գիտելիքը զարգացում է» կարգախոսը ձեռք է բերում հույժ արդիական հնչեղություն: Ազգային կառավարությունների կողմից այդ փաստի գիտակցումը նշանակում է գործնական քայլեր ձեռնարկել մարդկային զարգացման

---

[13] *Տե՛ս* Цыпин И. Р., Веснин В. Р. *Мировая экономика, М., 2008, с. 167-168.*

(մասնավորապես՝ մարդկային կապիտալում ներդրումների) ազգային ռազմավարության մշակման և կենսագործման ուղղությամբ, ինչն էապես կընդլայնի երկրի՝ գիտելիքները որպես գլոբալ հանրային բարիք յուրացնելու հնարավորությունները:

ЭВОЛЮЦИЯ РЫНОЧНОЙ СИСТЕМЫ НА БАЗЕ ЗНАНИЙ И НОВАЯ ЭКОНОМИЧЕСКАЯ РОЛЬ ГОСУДАРСТВА

МАРЗПАНЯН А. А.

Резюме

Современная экономическая наука располагает тремя версиями рыночной экономики: смитианская экономика, шумпетерская экономика и баумолская. Экономика, основанная на знаниях, требует переосмысления всей аксиоматики, присущей смитианской экономике. Условием развития нового общества является систематическая государственная активность, обеспечивающая мощную бюджетную поддержку науке, культуре и образованию. Предпосылкой дальнейшей гуманизации экономического развития является принципиально новая роль государства в рыночной системе, когда государство становится автономным рыночным игроком, максимизирующим социальную полезность.